



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 դեկտեմբերի 2012 թվականի N 1667 - Ն

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ՝ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ  
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի  
5-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո Ր Ո Շ  
ու մ է.

1. Հաստատել հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական  
հաստատության՝ հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստման  
կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող  
օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2013 թ. հունվարի 11  
Երևան



Կ Ա Ր Գ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ՝ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ  
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության (այսուհետ՝ ուսումնական հաստատություն), անկախ կազմակերպչի ավակական ձևից և ենթակայությունից, հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստման հետ կապված իրավահարաբերությունները:

2. Ուսուցչի վերապատրաստման գործընթացի անմիջական պատասխանատուն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատված՝ ատեստավորման ենթակա ուսուցչին վերապատրաստող երաշխավորված կազմակերպությունների ցանկի ձևավորման կարգով սահմանված չափանիշներին համապատասխան վերապատրաստող՝ երաշխավորված կազմակերպությունների ցանկում ընդգրկված կազմակերպությունն է (այսուհետ՝ վերապատրաստող կազմակերպություն):

3. Ուսուցչի վերապատրաստումը վերապատրաստող կազմակերպություններում ուսուցչի կողմից կրթության պետական կառավարման լիազորված մարմնի (այսուհետ՝ նախարարություն) սահմանած՝ ուսուցչի վերապատրաստման չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների կատարելագործման գործընթաց է:

4. Ուսումնական հաստատության ուսուցչի վերապատրաստման գործընթացի նախապատրաստման պատասխանատուն հաստատության տնօրենն է (այսուհետ՝ տնօրեն):

5. Վերապատրաստման ընթացքում ուսուցիչն ազատվում է իր պաշտոնական պարտականությունների կատարումից՝ զբաղեցրած պաշտոնի, մանկավարժական աշխատանքի ստաժի և վարձատրության պահպանմամբ:

## II. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

6. Ուսումնական հաստատության՝ հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստումը պարտադիր է և անցկացվում է տնօրենի կողմից հաստատված՝ ուսուցչի հերթական ատեստավորման ժամանակացույցով նախատեսված ժամկետին համապատասխան:

7. Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթացների ժամկետները սահմանում է նախարարությունը:

8. Տնօրենը տարածքային կառավարման լիազոր մարմնի ղեկավարին՝ մարզպետին, Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետին է ներկայացնում տվյալ տարվա ատեստավորման ենթակա ուսուցիչների ցուցակը: Տարածքային կառավարման լիազոր մարմնի (Երևանի քաղաքապետարանի) համապատասխան ստորաբաժանումը կազմում է իր ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ վերապատրաստման ենթակա ուսուցիչների ճշտված ցուցակը (ապահովելով ատեստավորման ենթակա ուսուցչին ներկայացվող չափանիշների համապատասխանությունը «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի պահանջներին): Նախարարության համապատասխան ստորաբաժանումը սույն կետում նշված կարգով կազմում է իր ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ ատեստավորման ենթակա ուսուցիչների ցուցակները:

9. Տվյալ ուսումնական տարում վերապատրաստող կազմակերպությունների ցանկը՝ ըստ ուսումնական առարկաների, հաստատվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանով և հրապարակվում զանգվածային լրատվության միջոցներով, [www.edu.am](http://www.edu.am) կայքում:

10. Վերապատրաստման դասընթացներն սկսվում են վերապատրաստող կազմակերպությունների ցանկի հրապարակումից առնվազն մեկ ամիս հետո:

11. Ուսումնական հաստատությունը հրապարակված ցանկից ընտրում է վերապատրաստող կազմակերպություն՝ պայմանագիր կնքելու համար: Պայմանագիրը կնքվում է վերապատրաստող կազմակերպության կողմից ատեստավորման ենթակա ուսուցչի փաստաթղթերի՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի պահանջներին համապատասխանությունն ստուգվելուց հետո:

12. Ուսուցիչների վերապատրաստման մոդուլները մշակվում են վերապատրաստող կազմակերպության կողմից՝ նախարարության սահմանած չափորոշիչների և ծրագրերի հիման վրա և վերապատրաստումն սկսվելուց ոչ ուշ, քան 15 օր առաջ հաստատվում են վերապատրաստող կազմակերպության ղեկավարի կողմից:

13. Տնօրենը վերապատրաստումն սկսվելուց առնվազն 10 օր առաջ ուսուցչին տեղեկացնում է վերապատրաստող կազմակերպության, վերապատրաստման ժամկետի և վայրի մասին:

14. Վերապատրաստման դասընթացի առնվազն երկու երրորդին մասնակցած ուսուցչին դասընթացի ավարտից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում տրվում է վկայական՝ 5 տարի ժամկետով, որի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը:

15. Վերապատրաստման արդյունքում ստացած վկայականի պատճենը կցվում է ուսուցչի անձնական գործին:

16. Վերապատրաստող կազմակերպությունը յուրաքանչյուր վերապատրաստման ավարտից հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում նախարարություն է ներկայացնում վերապատրաստման դասընթացի վերաբերյալ հաշվետվություն:

17. Ատեստավորման ենթակա ուսուցիչներին 2011 թվականի նոյեմբերին տրված վերապատրաստման վկայականները վավերական են մինչև 2016 թվականի նոյեմբերի 30-ը՝ ինչպես նույն դպրոցում, այնպես էլ՝ աշխատանքի վայրը փոխելու դեպքում՝ այլ դպրոցում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

